



«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան
 020, Էրեբունու փող. 38
 Հեռ.՝ + 374 10 43 26 61
 e-mail: erebunimuseum@gmail.com

Մամուլի հաղորդագրություն

07-ը դեկտեմբերի 2010թ.

Ս. ք. դեկտեմբերի 14-ին ժամը 14:00-ին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում տեղի կունենա «Ճանաչենք Հայաստանի հուշարձանները» հասարակական կազմակերպության տարեկան միջոցառումը՝ նվիրված հնավայրի տարածքում տեղադրված բազմալեզու տեղեկատվական վահանակների բացմանը, ինչպես նաև այցելուներին հնարավորություն ընձեռելով այսուհետ թանգարանի մշտական ցուցադրությանը ծանոթանալու փաստավավերագրական նորացված նյութերով ու մեկնաբանման նոր հնարքներով համարված ցուցափեղկերից: Հնավայրի հանրառչակման համատեքստում այսօրինակ բարելավումները կոչված են ամրապնդելու այցելուի ստացած տպավորությունները հնավայրից ու թանգարանից:

Էրեբունին ինչպես տարածաշրջանի, այնպես էլ հայկական հնագիտական ժառանգության նշանավոր հուշարձաններից է, մեկը Ուրարտու պետության հյուսիսային սահմանի երկայնքով կառուցված ուրարտական հզոր բերդաքաղաքներից, կարևորագույն տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոն: Այն հիմնադրել է ուրարտական թագավոր Արիգիշտի Ա-ն՝ մ. թ. ա. 782 թվականին՝ դարձնելով թագավորանիստ: Էրեբունին ռազմարշավների հենակետ էր նաև Սարգուրի Բ և Ռուսա Ա արքաների օրոք: Անընդմեջ նվաճողական պատերազմների հորձանուտում Էրեբունին կործանվեց մ. թ. ա. 6-րդ դարում: Սակայն չկորցնելով իր ռազմաստրատեգիական դերն ու նշանակությունը, բերդաքաղաքը դարձավ Հայկական լեռնաշխարհում կազմավորված 18-րդ ստորապոլսյան կենտրոնը՝ հայտնվելով Աքեմենյանների տիրապետության ներքո: Աքեմենյանները շարունակեցին շինարարական լայնածավալ աշխատանքներն Էրեբունիում՝ Խալդի աստծո տաճարի 12-սյունանի նախամուտքը վերափոխելով սյունազարդ դահլիճի՝ ապադանայի, որի օրինակները շատ տարածված են Աքեմենյանների հնագույն մայրաքաղաք Պերսեպոլիսում: Աքեմենյան շրջանի բազմաթիվ գտածոներ՝ կավե ամանեղեն, խեցեղեն, անոթներ, ճարձանդներ, ապարանջաններ, ուլունքներ, սաղավարտներ, նետեր, վահաններ, արծաթե մետաղադրամներ և եղջերազավաթներ են հայտնաբերվել 1950-1968թթ. Էրեբունիում իրականացված պեղումների 1-ին շրջանում:

Ստեղծման 1-ին իսկ օրվանից՝ 1968-ից «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գլխավոր գործառույթը Երևան մայրաքաղաքի վարչական սահմաններում գտնվող 3 կարևորագույն հնագիտական հուշարձանների (Էրեբունի, Թեյշեբահինի քաղաքատեղիներ և Շենգավիթ բնակատեղի) պահպանությունը, գիտական ուսումնասիրությունը և դրա արդյունքները հանրությանը ներկայացնելն է՝ ապահովելով հուշարձանների մեկնաբանություն ոչ միայն գիտական հանրության, այլ նաև դյուրըմբռնում հասարակության լայն շրջանակի համար՝ ներառյալ դպրոցահասակ և ուսանող երիտասարդությանը:

Այս տեսանկյունից հատկապես կարևոր է դառնում արգելոց-թանգարան – հասարակություն հաղորդակցությունը՝ ինչն ինքնին պահպանության գործընթացին սերտորեն առնչվող բաղկացուցիչ է: Հնավայրի հանրառչակմանն ուղղված բարելավումների շրջանակում ԱՄՓ-ի և արգելոց-թանգարանի գործակցության շնորհիվ այսուհետ հնավայրի տարածքում տեղադրված բազմալեզու տեղեկատվությունը կշեշտի Էրեբունիի պահպանության և այն սերունդներին փոխանցելու կարևորությունը: Բացօթյա վահանակները ազատ շրջայց նախընտրողներին հետայսու հնարավորություն կընձեռեն տեղաշարժվել ուղեցույց նշանների օգնությամբ, առանց էքսկուրսավարի միջնորդության ընկալել հուշարձանն ու վայրի նշանակությունը: Իսկ մշտական ցուցադրությունը դիտորդներին կներկայանա թանգարանի ֆոնդերում պահվող փաստավավերագրական նոր լուսանկարներով, ինչպես նաև կինովավերագրող Աշոտ Մովսիսյանի Արևմտյան Հայաստանում արված և Սանկտ Պետերբուրգի Պետական Էրմիտաժից համագործակցության արդյունքում ձեռք բերված լուսանկարներով:

ԱՄՓ-ի ծրագրերն իրականացվում են հովանավորների՝ «ՎիվաՍել-ՄՍՍ»-ի՝ Հայաստանում և տարածաշրջանում բջջային կապի առաջատար օպերատորի, Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոսի, Հայաստանում ԱՄՆ դեսպանների մշակութային հիմնադրամի, USAID/CAPS-ի, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցության շնորհիվ: ԱՄՓ-ի գործընկերներն են՝ Հայաստանի հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի Հայաստանի ազգային կոմիտեն («ԻԿՕՄՕՍ/Հայաստան» Հ/Կ), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ՀՀ ԳԱԱ Բուսաբանության, Հնագիտության և Ազգագրության ինստիտուտները, Մատենադարանը, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ մշակույթի նախարարությունները և Հայաստանի զբոսաշրջային գործակալությունը: